ԴԻՏՈՐԴ թեմատիկ

Հայտարարություն դեկտեմբերի 3-ին տեղի ունեցած հավաքի վերաբերյալ

2019 թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առջև ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միության կողմից կազմակերպվել էր հավաք, որի նպատակն էր հանդիպել ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի հետ և ներկայացնել իրենց պահանջները: Հավաքի ընթացքում Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից կատարված դիտորդության ընթացքում արձանագրվել են մասնակիցների՝ հավաքների ազատության իրավունքի նկատմամբ ոչ համաչափ միջամտություններ:

Մասնակիցների կողմից Վ. Սարգսյան փողոցի երթևեկելի հատվածում նստացույցը սկսելուց գրեթե անմիջապես հետո ոստիկանության ներկայացուցիչը մասնակիցներից պահանջել է հեռանալ փողոցից: Թեև պահանջը միայն փողոցի երթևեկելի հատվածն ազատելն էր, հավաքի մասնակիցների կողմից պահանջը չկատարելուց հետո ոստիկանությունը նստացույցի մասնակիցներից մոտ երկու տասնյակի բերման ենթարկեց:

Ոստիկանության կողմից մասնակիցներին բերման ենթարկելու ընթացքում (ժամը 16:30-17:30-ի սահմաններում) առանձին դեպքերում ոստիկանության կողմից կիրառվել է կոպիտ, անհամաչափ ուժ:

Գտնում ենք, որ նշված գործողությունը վարչարարության տեսակետից անհրաժեշտ չէր, քանի որ այլ եղանակով ոստիկանությունը կարող էր հասնել իր առջև դրված նպատակին՝ փողոցի երթևեկությունը վերականգնելուն: Հավաքի վայրում ոստիկանության ներկա ուժերը (*ըստ դիտարկման՝ ավելի քան 200, տարբեր ստորաբաժանումներից, ներառյալ՝ հատուկ գումարտակից*) բավարար էին այլ եղանակով մասնակիցներին երթևեկելի հատվածից հեռացնելու և վերջիններիս կողմից փողոցը կրկին փակելը թույլ չտալու համար (*օրինակ՝ մայթեզրի երկայնքով շղթա կազմելով, ինչը արդյունքում արեցին ոստիկանության ծառայողները*): Հաշվի առնելով, որ նստացույց իրականացնող մասնակիցների մոտ կեսը բերման են ենթարկվել, ոստիկանության գործողությունները հանգեցրել են հավաքի փաստացի դադարեցման: